



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ 09(323) 22.05.2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ		
83	«2017 թվականի ամառային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին» ԼՂՀ Նախագահի ՆՀ-57-Ն հրամանագիրը....	3
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
84	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի N 39 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 312-Ն որոշումը.....	4
85	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 333-Ն որոշումը.....	6
86	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 334-Ն որոշումը.....	7
87	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 335-Ն որոշումը.....	8
88	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 336-Ն որոշումը.....	9
89	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 339-Ն որոշումը.....	10
90	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 340-Ն որոշումը.....	11
91	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 341-Ն որոշումը.....	12
92	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԼՂՀ կառավարության N 342-Ն որոշումը.....	13
93	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 347-Ն որոշումը.....	14
94	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 14-ի N 158-Ս որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 348-Ն որոշումը.....	16
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՑՆ		

ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ		
95	ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 0782/02/16թ. որոշումը.....	18

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ  
ԶՈՐԱՅՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով **ո ր ո շ ու մ եմ**.

1. 2017 թվականի հուլիս ամսին անցկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների պարտադիր զինվորական ծառայության ամառային զորակոչը, որոնց 18 տարին լրացել է մինչև 2017 թվականի հունիսի 30-ը ներառյալ և որոնք չեն օգտվել զորակոչի տարկետման իրավունքից կամ կորցրել են այն, ինչպես նաև մինչև 2017 թվականի հունիսի 30-ը ներառյալ 18 տարին լրացող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից հաստատված ցուցակներում ընդգրկված այն քաղաքացիների, որոնք մասնակցել են բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննություններին և մինչև 2017 թվականի հուլիսի 15-ը չեն ներկայացրել զորակոչից տարկետման իրավունքը հավաստող փաստաթուղթ:

2. 2017 թվականի հուլիս ամսին զորացրել օրենքով սահմանված ժամկետում պարտադիր զինվորական ծառայությունն անցած զինծառայողներին:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը՝ երկշաբաթյա ժամկետում ընդունել սույն հրամանագրի կիրարկումն ապահովող համապատասխան որոշում:

4. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Բ.ՄԱՀԱԿՅԱՆ**

2017թ. մայիսի 17  
Ստեփանակերտ  
ՆՀ-57-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

4 մայիսի 2017թ.

N 312-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի N 39 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ոքոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ հիմնադրելու մասին» N 39 որոշմամբ հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության կառավարության  
2017 թվականի մայիսի 4-ի N 312-Ն որոշման

«Հավելված N 2  
Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության կառավարության  
2006 թվականի հունվարի 24-ի N 39 որոշման

**Կ Ա Ջ Մ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՑՈՒՂԻ ԵՎ  
ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետ (Խորհրդի նախագահ)
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարար
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարար
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի արտադրության և արտադրական ենթակառուցվածքների հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի տեղակալ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՈՐՈՇՈՒՄ

12 մայիսի 2017թ.

N 333-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի N 350 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Ասկերանի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,9 հեկտար այլ հողատեսքերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 մայիսի 2017թ.

N 334-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի N 351 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Իվանյան գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հատուկ նպատակային նշանակության 10,0775 հեկտար հասարակական հողերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 մայիսի 2017թ.

N 335-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 153 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրուբի շրջանի Տումիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,8817 հեկտար արոտավայրը և պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,3983 հեկտար անտառը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՈՐՈՇՈՒՄ

12 մայիսի 2017թ.

N 336-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի Ծարի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 9,2228 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2017թ.

N 339-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Ա. Հեքիմյան փողոցի թիվ 1/65 հասցեում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,013464 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2017թ.

N 340-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 588 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 0,02 հեկտար թփուտը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2017թ.

N 341-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա թ ա շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 378 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Դաշուշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,55544 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Դաշուշենի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2017թ.

N 342-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 148 որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի շրջանի Մարիամաձորի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,29 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Մարիամաձորի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2017թ.

N 347-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի մարտի 20-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016  
 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1  
 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	-	-	-	-
			այդ թվում՝				
<b>10</b>			<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	-	-	-	-
	2		Ծերություն	(70 000,0)	-	-	-
		1	Ծերություն	(70 000,0)	-	-	-
		06	Աշխատանքային կենսաթոշակներ	(70 000,0)	-	-	-
			<u>ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u>	(70 000,0)	-	-	-
	<b>9</b>		Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	70 000,0	-	-	-
		2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	70 000,0	-	-	-
		06	Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներ	70 000,0	-	-	-
			<u>ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</u>	70 000,0	-	-	-

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2017թ.

N 348-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 158-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածին, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ու մ է.**

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N 2 հավելվածի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված գյուղատնտեսական ծրագրերի և միջոցառումների մասին» N 158-Ա որոշմամբ հաստատված հավելվածի՝

- 1) 10-րդ կետում «1 000,0» թիվը փոխարինել «3 000,0» թվով.
- 2) 11-րդ կետում «2 186 845,6» թիվը փոխարինել «2 184 845,6» թվով.
- 3) 11-րդ կետի 5-րդ տողում «600 000,0» թիվը փոխարինել «598 000,0» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱԾԵՆՈՒՄԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	-	-	-	-
			այդ թվում՝				
<b>04</b>			<b>ՏՆՏԵՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	-	-	-	-
	<b>2</b>		<b>Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն</b>	-	-	-	-
		1	Գյուղատնտեսություն	-	-	-	-
		11	Կենտրոնացված կարգով գույքի և սարքավորումների ձեռքբերում	-	2 000.0	2 000.0	2 000.0
			ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն	-	2 000.0	2 000.0	2 000.0
		12	Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր	-	(2 000.0)	(2 000.0)	(2 000.0)
			ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն	-	(2 000.0)	(2 000.0)	(2 000.0)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ԴԵԿՎԱԿԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**



Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ Մահմանադրության 44-րդ և 45-րդ հոդվածների 1-ին մասերը, 6-րդ հոդվածի 2-րդ մասը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-6-րդ, 43-45-րդ, 47-րդ, 49-50-րդ, 113-րդ, 121-123-րդ հոդվածները, ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի՝ որոշմամբ կիրառված նորմերը, ինչպես նաև խախտել, չի կիրառել ու սխալ է մեկնաբանել հայցադիմումում և սույն բողոքում մատնանշված մյուս իրավանորմերը:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

01.09.2011թ. հրամանով ինքը նշանակվել է «Ստեփանակերտի թիվ 2 պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնտեսվարի պաշտոնում: Աշխատել է անբասիր: Սակայն Մանկապարտեզի նոր տնօրեն՝ պատասխանող Լազարյանը, չարաշահելով իր իրավունքները, առանց համապատասխան հիմքերի առկայության, սկսել է լարվածություն առաջացնել, այս կամ այն գործողության կատարման կամ չկատարման մեջ մեղադրել իրեն, որից հետո կայացրել է աշխատանքից ազատելու մասին անօրինական հրաման՝ աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականություններն առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու և աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու՝ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված հիմքերի մատնանշմամբ:

Գործատուի վերոնշյալ անհատական իրավական ակտը համարելով ոչ իրավաչափ՝ դիմել է դատարան: Պահանջել է անվավեր ճանաչել նաև կարգապահական տույժերի մասին թիվ 57 առ 03.09.2015թ. և թիվ 29 առ 27.04.2016թ. հրամանները, որոնցից առաջինի մասին ինքը դատարան դիմելու ժամանակ է միայն իմացել, իսկ երկրորդն իրեն ուղարկվել է 2016 թվականի մայիսին՝ պատվիրված նամակով: Հետևաբար՝ սույն գործով առաջին հերթին պարզման ենթակա են աշխատանքից արձակելու հիմք հանդիսացած հանգամանքների առկայության, տույժերի իրավաչափության փաստերը, այն էլ՝ վերաբերելի և թույլատրելի սպացույցների միջոցով: Ստորագրած դատարանները, սակայն, իրականում սահմանափակվել են գուտ գրավոր տեսք ստացած և «հրաման» վերտառությամբ փաստաթղթերի առկայության մատնանշմամբ, իր ներկայացրած ապացույցները հաշվի չեն առնվել, հայցն ու վերաքննիչ բողոքն ըստ էության չեն քննվել, դատական ակտերը չեն պատճառաբանվել:

Մասնավորապես, թիվ 57 առ 03.09.2015թ. հրամանի բովանդակությունից հետևում է, որ իրեն նկատողություն է հայտարարվել ջրի գերաձախսի ու Մանկապարտեզի տնօրենի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար: Սակայն ինքը տնօրենին չի վիրավորել: Իր մեղքով ջրի գերաձախս չի եղել, ինչը հաստատվել է նաև քննիչի որոշմամբ: Այսինքն՝ իրեն մեղադրել են հանիրավի: Ավելին, հրամանը ձևակերպվել է հետագայում՝ աշխատանքից արձակելու նախադրյալներ ստեղծելու համար, ինչը հաստատվում է նաև նրանով, որ այդ հրամանի մասին ինքը ժամանակին չի ծանուցվել, իրենից բացատրություն չի պահանջվել, որպիսի պահանջները չպահպանելը նույնպես անվավեր են դարձնում հրամանը: Բացի դրանից, տնօրենին ենթադրյալ վիրավորելը աշխատանքային կարգապահության, աշխատանքային պարտականությունների կատարման կամ դրանցում թերանալու հետ որևէ կապ ունենալ չի կարող:

Թիվ 29 առ 27.04.2016թ. հրամանի հիմքում նշվել են ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ, 224-րդ, 226-րդ հոդվածները: Թե կոնկրետ ինչն է հանդիսացել այդ տույժի հիմքը, հրամանում նշված չէ, իսկ 19.09.2016թ. իր ներկայացուցչի կողմից արված գրավոր հարցման արդյունքում պարզվել է, որ իրեն մեղաազարել են «խմելու ջրի անհամեմատ բարձր քանակի, 05.04.2016թ. ջրի բաքերը լցնելիս ջուրը ավելորդ բաց թողնելու, 06.04.2016թ. տնօրենի

աշխատասենյակում տնօրենի հետ անհարգալից վերաբերմունքի» համար: Այդ կապակցությամբ դատարանին ներկայացվել է Մանկապարտեզի աշխատողների անունից ձևակերպված «ակտ», «վկայագիր»: Մեկ այլ «հանձնարարական» վերտառությամբ, առանց թվագրության փաստաթղթից էլ դիտվում է, թե իբր իրեն 25.04.2016թ. հանձնարարվել է երկու օրվա ընթացքում բացատրություն տալ ջրի հաշվիչի անհամաչափ ցուցմունքի և տնօրենի հանդեպ անհարգալից վերաբերմունքի վերաբերյալ: Ըստ տնօրենին հասցեագրված գրության՝ ինքը բացատրություն չի տվել և չի ստացել «հանձնարարականը», իսկ ըստ «արձանագրության»՝ հրամանը ներկայացվել է իրեն, սակայն ինքը չի վերցրել: Մինչդեռ այդ ձևակերպումները կատարված են հետին թվով, որևէ խախտում ինքը թույլ չի տվել: Չի պահպանվել նաև տույժի նշանակման օրենքով սահմանված ընթացակարգը:

Իրոք, 2016թ. ապրիլի սկզբին Մանկապարտեզի ողջ կոլեկտիվը զբաղված էր այս կամ այն գործերով՝ կապված այդ օրերի հանրահայտ իրադարձությունների հետ: Ապրիլի 5-ին ջուր է թափվել նկուղի բաքից, ինչն իր նվազ ծավալով որևէ վնաս չի առաջացրել, չէր էլ կարող առաջացնել, դեռ չհաշված այն, որ ինքն ընդհանրապես ջուրը բաք լցնելու հարցում որևէ պարտականություն չունի: Ինքն ունի համապատասխան փաստաթղթեր, որոնցից դիտվում է, թե ինչքան ժամանակ է արձանագրել ջրաչափի ցուցիչի տվյալները ու զեկուցել տնօրենին՝ չնայած այն բանին, որ դա նույնպես կապ չունի իր աշխատանքային պարտականությունների հետ: Իսկ որ Մանկապարտեզում ջրի անհասկանալի կորուստ, այն էլ՝ իր մեղքով, տեղի չի ունեցել, ուղղակիորեն հետևում է նաև քննիչի որոշումից: Այդ ամենը տնօրենը հորինել է գուտ նրա համար, որ ազատվի իրենից, քանի որ նա փաստորեն «ընտանեկան բիզնեսի» էր վերածել Մանկապարտեզը՝ իրեն մեկուսացնելով իր անմիջական պարտականությունների կատարումից ու դրանք վստահելով իր ընտանիքի անդամներին:

Ստորադաս դատարանները դատական ստուգման չեն ենթարկել նաև աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին առ 17.05.2016թ. թիվ 37 հրամանը, դրա կայացման հիմքերի իրավաչափությունը և այլ էական հարցերը չեն պարզել:

Անհասկանալի է նաև, որ եթե ինքն աշխատանքային հարաբերություններում որևէ խախտում թույլ չի տվել, ապա ինչպե՞ս կարող է գործատուն վստահությունը կորցնել իր նկատմամբ, իսկ դատարանն էլ համաձայնել դրա հետ, այն դեպքում, երբ ակնհայտ էին գործատուի՝ ինչպես իր լիազորությունների, այնպես էլ պաշտոնեական դիրքի չարաշահումների փաստերը, ինչի մասին վկայում է նաև այդ կապակցությամբ հարուցված ու ընթացքի մեջ գտնվող քրեական գործը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2017 թվականի հունվարի 30-ի որոշումը և գործն ուղարկել Առաջին աստիճանի դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքն անհիմն է: Մասնավորապես, իրականությանը չեն համապատասխանում հայցվորի այն պնդումները, թե իբր հրամաններն արձակելիս չեն պահպանվել օրենքի պահանջները: Իրականում առաջին տույժը նշանակելիս պատասխանող կողմը պահպանել է «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 60-րդ հոդվածի պահանջները. պատշաճ կարգով, այսինքն՝ ժողովում, հայցվորի ներկայությամբ բարձրաձայն հայտարարելու միջոցով հայցվորին իրազեկել է նրա նկատմամբ նկատողության ձևով տույժ կիրառելու մասին: Երկրորդ և երրորդ հրամաններն արձակելուց առաջ հայցվորից պահանջվել է գրավոր բացատրություն ներկայացնել աշխատանքային կարգապահության խախտման հանգամանքների վերաբերյալ, սակայն հայցվորը հրաժարվել է բացատրություն ներկայացնել: Իսկ առանց կարգապահական խախտման հանգամանքների վերաբերյալ գրավոր բացատրության քննարկում լինել չի կարող: Հայցվորին թվում է, թե

Աշխատանքային օրենսգրքը միայն մի նպատակ ունի՝ այսպես կոչված, բարեխիղճ աշխատողին անբարեխիղճ ղեկավարից պաշտպանելը: Մինչդեռ օրենսգրքի ընդհանուր բովանդակությունից բխում է, որ դրա նպատակը նաև գործատուին անբարեխիղճ աշխատողից պաշտպանելն է: Տվյալ դեպքում, անբարեխիղճ աշխատողի կողմից հիմնարկին նյութական և առերևույթ վնասներ պատճառելը հետագայում կանխելու նպատակով գործատուն լուծել է նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը և նրան ազատել աշխատանքից: Աշխատանքային պայմանագիրը լուծելու և աշխատանքից ազատելու համար հիմք հանդիսացած արարքներն ու միջադեպերը համապատասխանում են Աշխատանքային օրենսգրքի և ոլորտին առնչվող իրավական ակտերի՝ սույն հարցով գործատուի կիրառած դրույթներին:

Վճռաբեկ բողոքը բովանդակային առումով չի համապատասխանում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 244-րդ հոդվածի այն պահանջին, համաձայն որի՝ բողոքում պետք է կոնկրետ նշված լինեն, թե Վերաքննիչ դատարանի կողմից նյութական և դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել և դրանց հիմնավորումները: Բողոքաբերը Վերաքննիչ դատարանի ենթադրյալ սխալները բողոքարկելու փոխարեն կենտրոնացել է իր գործատուի ենթադրյալ սխալների բողոքարկման վրա:

Վճռաբեկ բողոքը չի համապատասխանում նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 244-րդ հոդվածի այն պահանջին, համաձայն որի՝ բողոքում պետք է հիմնավորվի, որ ստորադաս դատարանների կողմից կիրառված նորմերը հակասական են կամ հակասում են Գերագույն դատարանի մեկնաբանություններին:

#### **4. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

1. «Ստեփանակերտի թիվ 2 պետական մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և Հայկանուշ Մակյանի միջև 01.09.2011թ. կնքված անժամկետ աշխատանքային պայմանագրով և նույն օրը Մանկապարտեզի տնօրենի կողմից արձակված կարգադրությամբ Հայկանուշ Մակյանը նշանակվել է Մանկապարտեզի տնտեսվարի պաշտոնում (*h. 1, գ.թ. 11, 12-13*):

2. Մանկապարտեզի տնօրեն Նինա Լազարյանի առ 03.09.2015թ. թիվ 57 հրամանով Հայկանուշ Մակյանին հայտարարվել է նկատողություն: *Հրամանի բովանդակությունը հետևյալն է. «2015թ. հուլիսի վերջին, ստանալով «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի ջրի արձանագրության տվյալները, գլխավոր հաշվապահ Աստղիկ Մեհրաբյանը տեղեկացրեց, որ ջրային տվյալները չափազանց գերազանցում են նախահաշվային պլանով հատկացված գումարին: Այդ առթիվ ես դիմեցի թե՛ «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ին, թե՛ քաղաքապետարանի կրթության բաժնին՝ իրազեկելով այդ մասին, խնդրելով և պահանջելով մասնագետների միջամտությունը: Հայկանուշ Մակյանն իմ ներկայությամբ գլխավոր հաշվապահին ասաց, որ ինչու՞ ես բարձրաձայնում այդ մասին, ջուր է, էլի, թող պետությունն այդ գումարները մուծի, հո քո գրպանից չես տալիս: Մակյան ինչպե՞ս կարելի է անտարբեր մնալ այդպիսի մեծ քանակությամբ ծախսերի առկայության դեպքում: Ես ասացի տնտեսվարին, որ պետք է անընդհատ հետևել հաշվիչին և գրանցել տվյալները: Նույնիսկ շաբաթ և կիրակի օրերին էր ջրային կորուստներ հայտնաբերվում: Բավական է, որ որևէ աշխատանքի մասին պահանջես նրանից ինչպես աշխատել, նա սկսում է գոռոռալ, անվայել բառեր օգտագործել, կոպտորեն վիրավորել աշխատողներին, անընդհատ շիկացնելով մթնոլորտը: Նմանատիպ արարքների ականատես են եղել մանկապարտեզի աշխատողները: Բազմաթիվ անգամ բանավոր զգուշացվել է Մակյանին այդ մասին, սակայն ապարդյուն: Նույնիսկ մի անգամ փորձել է ձեռք բարձրացնել իմ վրա, աշխատողները հետ պահեցին: Նմանատիպ արարքները հարիր չեն մանկավարժական կոլեկտիվ հանդիսացող, մանուկներ կրթող և դաստիարակող նախակրթարանին, որտեղ շատ հաճախ է ոչ վայելուչ բառեր օգտագործում բարձրաձայն, իսկ դա հեղինակագրկում է մանկապարտեզին: Այս մասին տեղեկացված է նաև*

քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ պարոն Կ.Ս.Մարգարյանը: Ղեկավարին վիրավորելու, ոչ վայելուչ բառեր արտահայտելու համար ենթարկել կարգապահական տույժի և տալ նկատողություն» (h. 1, գ.թ. 14):

3. Մանկապարտեզի տնօրեն Նինա Լազարյանի առ 27.04.2016թ. թիվ 29 հրամանով Հայկանուշ Մակյանին հայտարարվել է խիստ նկատողություն: *Հրամանում փաստական հիմքը նշված չէ* (h. 1, գ.թ. 22):

4. Մանկապարտեզի տնօրեն Նինա Լազարյանի առ 17.05.2016թ. թիվ 37 հրամանով Հայկանուշ Մակյանն ազատվել է աշխատանքից՝ լուծելով աշխատանքային պայմանագիրը: *Հրամանում կարգապահական խախտումը ձևակերպվել է հետևյալ ձևով.* «2016թ. ապրիլի 27-ի N29 հրամանով Հայկանուշ Մակյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ խիստ նկատողության կարգով՝ տնտեսվարի վերահսկողության շրջանակներում գտնվող պահեստային ջրաբաքերը լցնելիս նկուղը հեղեղելու և դիտողությունները չընդունելու կապակցությամբ: Հայկանուշ Մակյանը կարգապահական տույժերը ստանալուց հետո, փոխանակ ճիշտ եզրակացություններ անելու, շարունակել է անփույթ վերաբերվել իր աշխատանքային պարտականությունների կատարմանը: Հատկապես, կապված վերջին իրադարձությունների հետ, նկուղային հարկի, որպես ապաստարան նախապատրաստելու և բարեկարգելու հանձնարարությունն անպատշաճ է կատարել, որը տնօրինության կողմից հայտնաբերվել և արձանագրվել է 11.05.2016թ.» (h. 1, գ.թ. 24):

5. Նինա Լազարյանի դիմումի հիման վրա հարուցված քրեական գործի քննության արդյունքում Հայկանուշ Մակյանի արարքում հանցակազմի հատկանիշներ չեն հայտնաբերվել, չեն հաստատվել նաև Մանկապարտեզի ջրի օգտագործման հարցում չարաշահումներ թույլ տալու վերաբերյալ դիմումում արձանագրված փաստերը:

### **5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում քննելով վճռաբեկ բողոքը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունն աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված վարքագծի կանոններն են, որոնց պարտավոր են ենթարկվել բոլոր աշխատողները:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 222-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ 1/ նկատողություն, 2/ խիստ նկատողություն, 3/ այդ օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 121-րդ հոդվածի համաձայն՝ գործատուն իրավունք ունի այդ օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե մինչև տվյալ աշխատանքային կարգապահական խախտումը աշխատանքային կարգապահական խախտում թույլ տված աշխատողն ունի առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ: Այդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է պահպանել կարգապահական պատասխանատվության կիրառման կանոնները:

ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական տույժը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ տվյալ կարգապահական տույժը կիրառելու մասին իրավական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

«Վճռի բովանդակությունը» վերտառությամբ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածը, ի թիվս այլ պահանջների, սահմանում է, որ վճռի պատճառաբանական մասը պետք է պարունակի գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը /4-րդ մաս, 1-ին կետ/, առաջին ստյանի դատարանի եզրակացությունը ապացուցման ենթակա փաստի ապացուցված լինելու վերաբերյալ՝ գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար գործին մասնակցող անձանց ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը՝ այդ օրենսգրքի 47-րդ և 49-րդ հոդվածներին համապատասխան /4-րդ մաս, «գ» ենթակետ/:

«Վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումը» վերտառությամբ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 5-րդ մասը, ի թիվս այլ պահանջների, սահմանում է, որ վճռի պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրահանգում՝ բողոքի յուրաքանչյուր հիմքի հիմնավոր լինելու վերաբերյալ, մասնավորապես պատասխանելով հետևյալ հարցերին՝ ա/ արդյո՞ք հիմնավոր է վերաքննիչ բողոքի հիմքը՝ բողոքում տվյալ հիմքի վերաբերյալ նշված հիմնավորումների սահմաններում, բ/ եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ, ապա ի՞նչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրերի, օրենքների և այլ իրավական ակտերի այն նորմերին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ /2-րդ կետ/:

Սույն գործով ներկայացված հայքը ներառում է կարգապահական տույժերի ենթարկելու մասին հրամաններն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը բռնագանձելու մասին պահանջներ: Պատասխանողը հայքը չի ընդունել և խնդրել է այն մերժել՝ պատճառաբանելով, որ հայցվորին տույժերի ենթարկելուց աշխատանքային օրենսդրության խախտումներ թույլ չեն տրվել: Հետևաբար, Գերագույն դատարանի գնահատմամբ սույն գործով ապացուցման առարկան, մասնավորապես, ներառում է՝ 1/ հայցվորի կողմից իրեն վերապահված պարտականությունները պարբերաբար չկատարելու պատճառները, դրանց բնույթը (հարգելի կամ անհարգելի), 2/ հայցվորի մեղքն իրեն վերապահված աշխատանքային պարտականություններն առանց հարգելի պատճառների չկատարելու մեջ, 3/ հայցվորի նկատմամբ նախկինում կարգապահական տույժեր կիրառելը, նկատողությունների ու աշխատանքից արձակելու հրամանների ճշտությունը, 4/ կոնկրետ ինչու՞մ են կայանում կարգապահական տույժերի առիթ հանդիսացած խախտումները, 5/ խախտման ծանրությունը, կատարման հանգամանքները, հետևանքները, 6/ հայցվորի վարքագիծը կարգապահական

խախտումներին նախորդող ժամանակաշրջանում, 7/ որո՞նք են հայցվորի աշխատանքային պարտականությունները, 8/ պահպանվե՞լ է, արդյոք, կարգապահական տույժեր նշանակելու՝ օրենքով սահմանված ընթացակարգը:

Սույն գործով Առաջին ատյանի դատարանը հայցը մերժելուց պատճառաբանել է, որ «առ 03.09.2015թ. հրամանի հիմքում տնօրենին վիրավորելուց բացի, ըստ էության ընկած է եղել մանկապարտեզում օգտագործված խմելու ջրի համեմատաբար մեծ քանակի պատճառները պարզելու վերաբերյալ տնօրենի հանձնարարականի չկատարումը, արդյունքում վերջինիս հետ վիճաբանելը, անվայել արտահայտություններով վիրավորելը, որը վերջին հաշվով հանգեցրել է աշխատանքային կարգապահության խախտման»: Անդրադառնալով առ 27.04.2016թ. թիվ 29 հրամանով հայցվորի նկատմամբ կիրառված խիստ նկատողության ձևով կարգապահական տույժի իրավաչափությանը՝ Առաջին ատյանի դատարանը նշել է, որ «գործում առկա տնօրենի հանձնարարականով, գործավար Ռ.Բարխուդարյանի՝ առ 25.04.2016թ. գրությամբ, առ 05.04.2016թ. «ակտ» և առ 29.04.2016թ. «արձանագրություն» վերտառությամբ փաստաթղթերի գննությամբ, հրամանի հիմքում ընկած փաստական հանգամանքների վերաբերյալ հարցաքննված վկաների ցուցմունքներով դատարանը հաստատված է համարում, որ 27.04.2016թ. թիվ 29 հրամանը բովանդակային և ընթացակարգային առումով կիրառվել է աշխատանքային օրենսդրության նորմերի պահանջներին համապատասխան»:

Առաջին ատյանի դատարանն այնուհետ պատճառաբանել է, որ «առ 17.05.2016թ. թիվ 37 հրամանի, առ 11.05.2016թ. «ակտ» վերտառությամբ փաստաթղթի ստուգմամբ արձանագրված թերությունների և նկուղային հարկում առկա հակասանիտարական վիճակի վերաբերյալ հայցվորին ուղղված տնօրենի հանձնարարականի, առ 11.05.2016թ. «տեղեկագիր» վերտառությամբ փաստաթղթի գննությամբ, վկաների ցուցմունքներով դատարանն ապացուցված է համարում հացվորի հետ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ կետերի հիմքով աշխատանքից ազատելու մասին հրամանի հիմնավորվածությունը»:

Վերաքննիչ դատարանը համաձայնել է Առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունների հետ ու վճիռը թողել օրինական ուժի մեջ: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ «նկատի ունենալով, որ հայցվորի պահանջն ըստ էության վերաբերում է Պատասխանողի արձակած հրամաններով իր իրավունքները խախտելուն, ինչպես նաև, որ հայցվորը վիճարկում է նշված հրամանների իրավաչափությունը, սույն քաղաքացիական գործով էական նշանակություն ունի այն հարցի պարզումը, թե, արդյոք ք, հայցվորը թույլ է տվել կարգապահական խախտումներ, այսինքն՝ չի կատարել իր ծառայողական պարտականությունները, որը և հիմք է հանդիսացել նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար»:

Վերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը չի համապատասխանում այդ որոշման պատճառաբանական մասին առաջադրվող՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին, իսկ Առաջին ատյանի դատարանի վճռի պատճառաբանությունները չեն բխում վճռի պատճառաբանական մասին առաջադրվող՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ապացուցման առարկայում չեն ներառվել, չեն ստուգվել ու չեն գնահատվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող՝ սույն որոշման մեջ շարադրված բոլոր փաստերը, որ հայցն ըստ էության չի քննվել: Ավելին՝ հաշվի չի առնվել, որ հետազոտման ու գնահատման չեն արժանացել անգամ գործում առկա վերաբերելի ապացույցները, այդ թվում՝ քննչական մարմնի որոշումը, ինչն ազդել է գործի ելքի վրա: Իսկ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի կիրառման իրավաչափության հարցին ստորադաս դատարաններն ընդհանրապես չեն անդրադարձել:



Նման հանգամանքներում Հայկանուշ Մակյանի վճռաբեկ բողոքի հիմքը հիմնավոր է:

Վերոնշյալ պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 256-րդ հոդվածով՝ Գերագույն դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. հունվարի 30-ի որոշումը և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

ստորագրություն  
ստորագրություն  
ստորագրություն

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ  
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ